



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10322

891.99

p-81

1901

ԲԱՐՍԵՂ Պ. ԻՍՊԷԶԵՐԵԱՆ

891.99 ս
Ի-81 ԱՂՕՏ

ՆՇՈՅԼՆԵՐ



1171
1001

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک فی ۱۶ ربیع الاخر سنہ ۳۱۹ و فی
۱۹ تموز ۳۱۷ تاریخ فی و ۲۳۶ نومرولی رخصتنامه سیله طبع اولتمشدر



Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պապ-Ալի հասեկի, քի. 38



2493

Զ Օ Ն

Ա. Ռ.

ԵՂԻՍՉԱԲ ԷԾԷՆՏԻ ԵՂԻՍՉԱՐԵԱՆ

Ի ՅԵՍՍԱԿ ՄԵՐ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ

ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅՆ



2003

Յարգոյ Բարեկամ,

Անկարագրելի ուրախութիւն մը զգացի երբ հայրիկիս նամակին մէջ յորում ներկայեցաւ եր Զեր նամակն ալ, կարդացի թէ ի մօտոյ ճամբայ պիտի ելնէիք սեղոնոյս բաղային դպրոցին մէջ պաշտօնադարեցու համար :

Այո՛, խոսմենագանց չգնունեցաք եւ ամիս մը վերջը ժպիտներով բարեւեցիկն գիրար, կը յիշէք ձիշ գիշերուան ժամը երկուփին շուկայի պողոսային վրայ, ուրկէ երբեւեկոյ խոռուն բազմութիւնը եւ ոչ ալ գիշերին կուռ մրութիւնը արգելք մը եղան առաջին պատահական նայումսով մը Զեզ ճանցնալու եւ կարօսով Զեր ձեռքերը սեղմելու :

Եւ հիմա որ միասին եմք, միեւնոյն մթնոլորտին մէջ, միեւնոյն երկնքին ցոյ ընկող զոյզ ծաղկներու պէս, միեւնոյն երկնքի սալ . . . :

Երանութիւն մը կը զգամ երբ Զեր փոքր սենեկին դուռը բացած Զեզ հոն գնեցով միայնակ . . . նստիմ Զեզի մօտ, խօսելով այն բաներուն վրայ որոնք մեր արտիկ ամենասիրելի ընկերներն են . . . ճնոյք, բարեկամ ու երջանկութիւն . . . բառեր որոնք մեր արտիկ ու հոգւոյն կուրծքներն են ալ . . . :

Չեր մերք գուարք եւ մերք իսուր երգերը
 արսակցական եռակորն շէշ մը եւ միայնութեան
 մեղանադանք քրքումներն ունին, որոնցմէ ա-
 նաւել ոչ մի բան երջանկութիւն կրնայ՝ սալ
 մեկնակցիկ պակտութիւն մը . . . :

Այո՛, չի պիտի մոռնաւ այդ պիտիստիք վայր-
 կեանքները որոնք Չեր ցանկալի ընկերակցութեանք
 անցան մերք Չեր սեկեկիկ մեջ, մերք սոռուսիկ
 շուրջ եւ մերք անայի շերանց վրայ, որոց խոր-
 հորդաւոր շուրջներ այլ եւ այլ վերջիշումներ կը
 ծնեին մեր արտին մեջ :

Չպիտի մոռնաւ այդ վայրկեանները՝ որոնք
 անշուրջ Չեր արտին մեջ ալ պիտի որոշուեն իրենց
 գոնէ աղօս յիշատակները եւ հետեւաբար չպիտի
 մոռնաւ ինծի հետ դուք ալ . . . գորս առ յարէս
 յիշելու ու յիշեցնելու մարմնացով կը համարձակիմ
 Չեզ միայն Չեզ ձօնել իմ « Աղօս Նեոյներս », ո-
 ռոնք գիտեմ որ արժանիք գուրկ եմ, բայց վստահ
 եմ որ զայն ընդունելու բարեւորութիւնը պիտի
 ունենայ :

Չեր անձնուր բարեկարգ

Բ. Պ. Բ.

Քեկեր 22 Մայիս 1901



Բարեկարգ,

Շնորհակալ եմ որ կրցած եմ հասկնալ թէ որ-
 քան նախանձախնդիր եմ յիշատակներու մասին,
 որքան կը սիրեմ այն բաները որոնք այն յիշա-
 տակները վերջիշեցնելու յատկութիւնն ունին :

Բարեկարգ, Չեր ինձ ձօնած « Նեոյներ » որ-
 քան ալ « արժանիք գուրկ » ըլլան (Չեր խօսով)
 ինծի համար մեծ բաներ են . ուր որ ուղղակի
 արեւ արձակուած « Նեոյներ » են որ ինծի ձօ-
 նելու պատրաստակարարութիւնը ունեցեր են . բա-
 րեկարգի մը ձօնը որքան ալ « արժանիք չունենայ »
 եւ իր այժիկ չեցին բան մը համարուի բանկագին
 ք միշտ անոր համար որ զայն ընդունելու վայելքը
 կունենայ :

Աղիստին համար դրամական, հարուստին հա-
 մար գոհարեղէն նուերներ բանկագին յիշատակներ
 են, իսկ ինձի համար ձեր ձօնը անեկեկ բանկա-
 գինը, որ չհասնիր, չմաշիր եւ չքառամիր եւ որ
 յիշատակները կը նուիրագործէ :


Ուստի կրկնակի շնորհակալութեանք կընդու-
 նիմ Չեր Չօնը « Աղօս Նեոյներ » դ որ մեր հոս
 տեղի կեանքին յիշատակները պիտի յուսաւորէ :

Բոյոյ միշտ

Ե. ԵՂԻՍԱԲԵԱՆ

Քեկեր 24 Մայիս 1901





Թէեւ յունիս՛ր քրքումն քնար մը քանաս-
տեղծի, քայց յոկ աղօս լայտերս ի ձեռին կը
ներկայանա՛ս քնարներու առպարհզը . . .
անշուշտ սխալ եւ քիւր ձաւքաներէ՛ն անցած
եւ ու կ'անցնիս՛, քայց կը յուսամ որ քա-
րէսիս ընթերցողները պիտի ներեն ինծի,
քանի որ լայտերս աղօս է, հետեւաբար զիս
առաջնորդող այն լայտերը «Աղօս Նշողներ»
ունի :

Բ. Պ. Ի.



ՀՈՎՈՒՒՆ ՍՐԻՆԳԸ

Լեռներ, սարեր, ձորեր, դաշտեր,
Կանաչ շուրեր եւ հագեր,
Եւ բուշիկներ ծառէ ի ծառ
Թռչիկն, ուսն՝ւն, անդադար :

Ինչո՛ւ հովի՛ւ, հո՛ղ, շուփին սակ,
Լուռ կը խոկաս միայնակ .
Մոռցած գառներդ որք ցիր ու ցան
Մարգերու մեջ ման կուգան :

Ձրգէ՛ խոհերդ, սրինգդ առ ձեռք,
Ժպտուն դիմօք ու աներկ
Հնչեցո՛ւր միտս զըլարքերես,
Մ'ըլլար սըխուր դու ինձ պէս :

Սիրեմ լսել սրինգիդ ձայն,
Տըխուր քնար հովուական .
Որ քեզի հետ եւ ինձ համար,
Է մի հաղցրիկ մըխիթար :

Տե՛ս , գառնուկներդ կը պապակին ,
 Ո՛հ , ծարաւի բախձագին .
 Թող չը մարին անոնք ի զուր ,
 Փուքա սրինգդ հնչեցուր :
 1898 *Կեսարիա*

ԳԱՐՆԱՆ ՄԷՋ

Պայծառ արեգակն կը շողայ զըւարբ ,
 Կը փայլին մարգն ու ծաղկունք ցողազարդ
 Սիրուն գառնուկներ կ'ոսոսեսն վեր վեր ,
 Պարելով երգեն , զարուն է եկեր :

Ձովաւունչ զեփիւռ հեւայ մեղմագին ,
 Համբոյրներ սալով ծաղկին ու մարգին .
 Անուշ կը բուրեն ծաղկունք զարնանուր :
 Կարծես կը պարեն զարուն է եկեր :

Ու երբ մուք գիշեր կը պատէ զերկիր ,
 Կը պնեն երկինքն սասղեր լուսալիր
 Որք ժպտուն ցոլով անհոգ անսարբեր ,
 Սիրահարներու կը դիտեն յոյզեր . . . :

1898 *Կեսարիա*

ԳԵՐԵՉՄԱՆԷՍ ԱՆԴԻՆ

Թէ արփույն շողով դաւեսերն ծաղկածին .
 Չորնան՝ չորցնեն վառ սիրս անմեղին
 Թէ սոխակն բռի վարդենւոյ բփեկն
 Դեռ պիտի սիրեմ :

Թէ ծով ալեկոծ մուրնչէ ուծգին ,
 Ու լուրք կոհակներ չորս դիս սփռուին .
 Տալով արհաւիրք ինձ կասադորէն ,
 Դեռ պիտի սիրեմ :

Թէ փայլուն լուսնակ մքին բըւի ինձ ,
 Եւ չըպպլան վառ լոյսեր երկինք .
 Թէ խաւար պատէ իմ արփին անեկն ,
 Դեռ պիտի սիրեմ :

Թէ ցուրս քամիներ փրչեն սասկազին ,
 Եւ մուք մեուշներ պատեն ջինջ երկին .
 Խեղդուկ իմ ձայնը պիտ' պոռայ նորէն
 Թէ պիտի սիրեմ :

Եթէ անկողնոյս մէջ հիւանդագին ,
 Նեւարեմ շիբբ մորս արցունքին .
 Պիտի գոչեմ միտս արփս խորերէն ,
 Թէ դեռ կը սիրեմ :

Թէ Տխուր կոչնակ հնչէ իմ մահուան ,
 Եւ զիս ողբալով սանին գերեզման .
 Երբոր սեւ հողեր բափեն ո՛հ վրասս
 Ի գուր սիւբելով դու զիս պիտի լաս . . . :

1898 Կեսարիս

ԲԱԺԱՆՄԱՆ ԳԻՇԵՐ

Կես գիշեր է ցուրտ հով մի կայ հով ուժգին ,
 Պուրակներէն քաւ խառտափներ կը լսուին .
 Եւ ամեն ոք սան խցկին մեջ հանդարտիկ ,
 Կը քնանայ անուշիկ :

Դիտեմ զերկին , բայց լուսնի վառ ճանաչներ ,
 Սեւ եւ անգուր ամպոց ետին են պահուեր .
 Զունիմ ընկեր, զի բուրբ գրիչ ինձ համար ,

Կ'ըլլան միակ մխիթար :

Անցեալ աւուրց յիշեմ հաղորիկ յիշատակ ,
 Ադամանդէ եւ գոհարէ եւել քանկ .
 Ու յիշելով կը հառաչեմ քախտալից ,
 Զի պիտ' զասուիմ ներանից :

Ահ գիշեր է քնոյ մե՞ջ է քէ արթուն ,
 Եւ սեւ աչերն աղի շիթեր կը հեղուն .
 Լաւ եր մեռնիլ ներս գրկին մեջ աւանդ ,
 Քան բաժնուիլ այսօր վաղ :
 1899 Քենկրը

Զ Օ Ն

Երբոր զեփիւուն այն քաղցրաբոյր ,
 Որ կը հեւայ զուարթագին ,
 Կը նըւրբէ մի քաղցր համբոյր ,
 Վարդաժպիտ առաւօտին .

Եւ սոխակն ա՛յն այն յուզիչ ,
 Վարդին ձօնէ երգ սիրաւունչ .
 Ես քեզ համար չունիմ այլ ինչ ,
 Բայց արտիկես սիրոյ մի փունջ :
 1899 Գաղասիս

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Օր մը մենիկ եւ մրսախոն հաղափին ,
 Շուրջը գացի փարատելու իմ յոյզեր ,
 Տանց կանթեղներ աստեղց նման ցոլային ,
 Իւր սեաւ ֆողը սարածած եր մուր գիշեր :

Փոքորիկ մը փրբաւ գանկիս մեջ անձայն,
Յուզեց սիրս աղիքներս գալարեց .
Տեսայ կայնած հրեշտակի մը նման ,
Զննաղ կոյս մի հազիւ տարւոք տասն եւ վեց :

Իմ քայլերուս հետեւեցան իր քայլեր ,
Ներս օրբանց ինձ հայիլը ըզգացի .
Առաւ ձեռքս իւր ձեռքին մեջ անվեհեր ,
Հրապուրեց յայնժամ սիրքս դեռափ :

Կ'ըսէր խօսե՛ եւ կը գգուէր իմ այտեր ,
Գգուաններով շատ հեռացանք քաղաքէն .
Նստանք հեռուն գետեզրի մ'առքներ ,
Ուր հանգչեցանք մենք վայրիկ մի հեւալին :

Քամիներէն վտարուելով քույս ամպեր ,
Դեպ արեւմուտք սլանային անյապաղ .
Կոյսը չննաղ մեիկ ննջէր եւ հանգչէր ,
Դրբած գլուխն ծունկիս վրան ո՛հ դանդաղ :

Հազիւ ամպերն խայտաբոլոյ՛ց ցուեցան ,
Ղուսնի շողով փայլեցաւ այն անտառակ .
Դառն պատահե՛ք, սուտերներու մեջ ցիր ցան ,
Քի ափսո՛ս , բախիծներուս հետ մինակ . . . :

1900 Քենկրը

Մ Ա Ք Ո Ւ Ր Ս Է Ր

Մայիս ամսոյ առաւօտ մ'ե՛ր ,
Երբ տեսայ քեզ միայնակ .
Վարդ մ'ի ձեռքին գետի մ'ափեր ,
Կը օրջէիր շարունակ :

Բեհեզեայ էր այն օրշաղթս ,
Որ կրէիր քու վերան .
Կը նազէիր դու ո՛ր կոյս վե՛տս ,
Հանգոյն չննաղ Աստղկան :

Կը դիտէին կապոյտ երկին ,
Այն կապտագեղ քու աչեր .
Եւ նայուածքեդ այն երկնային ,
Կը դողային վե՛հ արտեր :

Կը նեմէիր բայց անժրպիտ ,
Դեմք մ'ունէիր ո՛վ աղջիկ .
Եւ կոչեցին քեզի « անսիրտ »
Քանի մ'անմիտ պատահե՛ք :

Զրսի ես քեզ , անսիրտ ոգի՛
Խնայէ մատաղ հասակիս ,
Զի առաջին նայուածքով մի
Տեսայ որ ինձ կը ժպտիս :

Մաքուր սիրով ա՛յս այն ասեմ
 Մեր անբիծ սիրտ կապուեցան .
 Եւ համբոյր մը քո այտերէն ,
 Եղաւ կրնիք մ'անբաժան :

Զէի կրնար ժայտիլ երգել ,
 Առանց քեզի նազելի .
 Ինչպէս երգիչն այն Փիլոմել ,
 Առանց վարդի կը սարի :

Շնչիկդ միայն կարող լիներ ,
 Մարել արտիս վառ կրակ ,
 Եւ վարդագեղ փուկին շքերէր ,
 Էին ինձի բափոփանք :

Նախանձեցան մեր անմեկին ,
 Այն արայօդ միութեան .
 Բայց ի զուր տեղ նիգ , ջանք ըրին ,
 Քակտել մեր սերն անբաժան :

Դժուարին է միտս իբարմէ
 Զանել զոյգ մի անմեղներ .
 Զի անոնցը մաքուր սեր է
 Արդէն Աստուած ի՛նչ է , սէր :

1900 Քենկրը

Ն Է Ր Ա Մ Ր Մ Ո Ւ Ն Չ Ը

Թե դու գարնան ես սիրահար ,
 Ե՛կ քեզ ձօնեմ իմ բարձ արտիկ ,
 Ուր գարուն մը մտադալար ,
 Պիտ' վայելես զըւարթ մենիկ :

Թե զեփիւռի մեղմիկ գգուանք ,
 Մխիթարէ քու վառ հոգին .
 Առ իմ շունչս միտս անուշակ ,
 Անմեղ արտիս նուէրն անգին :

Թե յոյժ սիրես վարդին բոսր ,
 Բոյրերն անուշ քերքերն բարակ ,
 Ե՛կ Քեզ ձօնեմ այտես խնձոր ,

Ու սիրելիս բող իմ լանջակ ,
 Լինի յաւե՛ս սիրոյդ օրրան ,
 Եւ ետքն ալ սիրոյդ դամբան :

1900 Քենկրը

ԼՈՒՍՆԱԿ

Կես գիշեր է լուսափողփող ո՛ր լուսնակ,
 Քեզ կը դիտեմ ժառուր արժիւ շարունակ.
 Ու շողերդ չեմ գիտեր քե ինչո՞ւ լոկ
 Կը փարասեն արժիս ցաւերն ու մորմոխ:

Շրջիս հեզիկ, ո՛վ երկնային քազուհի,
 Ասդիկներու ողջոյն տալով խանդալի.
 Ու չես մոռնար ողջունել զիս ալ — մի հեզ -
 Որ կը սիբէ շողերդ պայծառ ու հրաշքի:

Կեցիւր պահ մը. հո՛ս երկրնքի վերերէն
 Դիտէ գեթ մի անգամ շուրջդ վեհօրէն.
 Ասդիկներն որ ակնապիտ դիտեն քեզ
 Բոլորսիք շարունած ծայտով դէն ու դէս:

Մի ծածկըլիւր ամպերու տակ քրիտրակ,
 Ալ դադրեցուր մի քիչ ընթացքդ այդ արագ -
 Որովհետեւ ո՛վ քազուհի երկնանքեմ,
 Քեզ տեսնելով ներս դեմքը կը յիշեմ:

1900 Քենկրը

ԱՌ ԿՈՅՍՆ

Սոխակի գեղգեղ
 Դադրի եւ մօտիկ.
 Ո՛վ կուսիկ անմե՛ղ
 Մի կենար լռիկ,
 Խօսէ անդադար
 Դու քաղցրաբարբառ:

Ա՛լ վարդի բուրում,
 Չի սփռի աստ անդ,
 Համայն բնութիւն
 Չը հագնի իւր զարդ
 Թող եւ հետք բարբառ
 Լքուի անդադար:

Թող Եւսերպէի
 Քնար քաղցրաձայն,
 Փերի խորտակուի
 Քեզ մօտ, ո՛վ կուսան
 Որ դու միտք երգես
 Չայնովդ արտակեզ:

Սասկաւունջ հողմեր
 Ալ բող վերջ գտնեն
 Լրուեր է միջդդեռ
 Բնութիւն ամեն
 Թող կոյս ետ արժին
 Հառաչքը լքուին:

Բայց դու գեփիւռ հետք
 Փրչէ զովագին,
 Մի տայր հրամտես
 Ա՛հ մեզ եւ վերջին
 Չի կոյսին մեմունջ
 Բերես քաղցրաւունջ:

1900 Քենկրը

1001
 1771

Վ Ա Ր Դ Ե Ն Ի Ն

Ծաղիկ մ'էիր դեռ կիսաբաց
Բուրումնաւե՛ս բերքերով լի,
Անգուք խորշակն քեզ չի գրաց,
Թառամեցոյց իմա նազելի:

Անքիւ մեղուք միտք բզգալով,
Հաւաքէին հիւրդ անուշակ.
Եւ երբ փրջեր զեփիւռը զով,
Ուսիդ քառամ կ'երգէր սոխակ:

Ողբալ պէտք է ալ անդադար,
Վաղաքարեամ սնկիդ մօտիկ.
Չ'երգէր սոխակ քեզի համար,
Մեղուն փնտռէ ուրիշ ծաղիկ:

Ծաղիկ մ'էիր դեռ նոր փրքած,
Դու պնէիր լեռանց սարեր.
Փունջ կազմէի բերքիդ ցողած,
Որ զերդ արցունք ձեռքս քոջեր:

Եւ յէս այսու գարնան հովեր,
Ձով զով փրջեն մարգերու մօտ,
Հրճուի, խնդա՛յ երբ սիեզեր,
Նորէն սիքս է քեզի կարօտ:

Առանց քեզի կենաց զեփիւռ,
Անբոյր ծաղկանց հոս կը սփռէ.
Թռչուններու երամներ բիւր,
Կ'ասեն գարունն ի արեւ:

Եւ եւ երբու երբամ խորունկ
Ձոր մը նսնիլ եւ Քեզ յիշել,
Պիտի դիտեմ քու չքնադ՝ սունկ
Մի՛նչեւ կենաց փսի իմ քել:

1900 Քենկրդ

Ձ Ի Ս Մ Ի Ա Յ Ն Տ Ա Ր

Առ Ծնողն իմ

Մայրի՛կ, ինչո՛ւ սրտում ժուր
Նսած մենիկ մահնիս քով,
Թրջես այսերն քու ձիւնաքոյր
Ո՛հ դառնագին շիրքերով:

Ինչո՛ւ համար միտք անծայիս
Ձեռքդ նակսիս կը բերես,
Ի՛նչ շուտ մայր իմ այսերդ վրճիս,
Տժգունեցան մութիւն պէս:

—Լուռ կա՛ց, որդեա՛կ, պահ մի խնդրեմ,
Ձի մայրիկդ բող չի լայ.

Պիս' անիծեմ արսը դժխեմ,
Որ քեզ սանջէ անխնայ:

Մեղմ խօսեցուց այդ քաղցրահինչ,
Յուզես որդեա՛կ միտս իմ սիրս.
Չունիս հանգիստ, ոչ քաղցր նինջ,
Ի՞նչպես չըլլամ անծայիս:

— Ինչո՞ւ մայրիկ անուշ լեզուաւ,
Կըսես լուռ կա՛ց, քու որդւոյն.
Չեմ պատճառեք քեզ գլխի ցաւ,
Թէ լինիմ իսկ ես անբաւ:

Յուզեալ սիրտդ թող հանդարտի,
Շատ հանգիստ եմ մայր հիմայ,
Սրբե՛ շիրերն աչացդ աղի,
Ըսե՛ հայրս ալ թող հոս գայ:

— Հոգւոյս հասո՛ր, հայրիկդ այսօր
Համբուրելով քու այտեր,
Ելաւ դռնէն քայլամուտը,
Կարծեմ քիչ մ'ալ կ'արտասուէր:

Նա մի դարման խորհիլ գնաց
Բժըշկին քով, ցաւերուդ,
Նղբայրիկդ ալ յուսահասած,
Կը պաղտա՛ն սիրոջ գուրբ:

— Ըսէ ինծի անուշ մայրիկ,
Արդեօք ամառո՞ս է երկին,
Վերջալո՞յս է որ մեր խցիկ,
Թըւի աչքիս յոյժ մըքին:

Ո՞ւր ես մա՛յր իմ, է՛կ, կ'աղաչեմ,
Երկիւղ մ'եկաւ վրաս բայց դեմ
Գրկէ գիս, եւ բժնամուտս դեմ
Բազուկներովդ մախառէ:

— Մի՛ երկնչիր, ի՞նչ կայ, որդեա՛կ,
Հոս մօտդ եմ ես անձայն.
Եկո՛ւր, եկո՛ւր, գիրկս համակ,
Թող քեզ լինի օրեւան:

Մի՛ մի՛ վախմար հոգւոյս հասո՛ր,
Հոս ոչ ոք կայ բաց յինէն,
Բայց հայրիկդ հետ քու եղբօր
Հիմայ կու գայ հոս նորէն:

.

.

— Տե՛ս մա՛յր իմ, տես, ո՞վ է սա
Որ բժտապաւ ինձ մօտ գայ. . . .:

. . .

Ո՞վ ես կեցեր, մի՛ մօտեմար,
 եւ մի ծայրի իմ մօր մօս.
 Ինչո՞ւ կու գաս յայս շխտեր վայր,
 Ո՛ւր ոչ լոյս կայ եւ ոչ օդ:

— Ե՛նե՛կ՝ քեզի սիրո՛ւն մանկիկ,
 Թեւե՛րու մեջ դու հանգչած,
 Թող լով այս տեղ եւ փողոց՝ մայրիկ,
 Պիտի երթաւ առ Աստուած:

— Ո՞վ ես արդեօ՛ք լսե՛ք ինձի,
 Կը սարսուռայ իմ մարմին.
 Տես մեր խուցը՝ կ'մքազնի,
 Ալ աչերբս թգուցնին:

— Հրեօտակ մ'եմ ես երկնառայ,
 Հայրդ ու մայրդ քող հրճուին.
 Երանի՛ր քեզ դեռ չ'եղած այգ,
 Պիտի քոչինք դեպ երկին:

— Անգուր մ'ես դու քեւ ծայրս,
 Ձե՛ս նշմարեր իմ մօր շիր,
 Որ հստած է մօս սնարիս,
 Կուլայ դեմքով մ'անժրպիս:

— Հրճուե՛ր եւ դուն շխտեր որդեա՛կ,
 Ե՛կ քեւիս մեջ անվեհեր.
 Երկնից ի մեջ լի են հրճուանք,
 Հոն պիտի մոռնասու քու ցաւեր:

— Ես ինձ համար չեմ խօսիւր քեզ,
 Հեզ մայրիկս չե՛ս տեսներ.
 Գրբա ներս սրբին հրկեզ.
 Թող զիս, քոխը, դեպ ի վերս:

— Թե դու այնքան ունիս գորով
 Մայրիկիդ դեմ որ կու լայ,
 Զայն ալ կրնամ սանիլ սիրով,
 Ալ քող չի լայ քու վրայ:

— Բայց տե՛ս հայրիկս ու իմ եղբայր,
 Եկած արցունք քափեն վա՛հ.
 Անգուր մ'ըլլար հրեօտակ արգար,
 Գրբա՛, Աստուած գոն կըլլայ:

— Ձե դժուարին սիրո՛ւն որդեա՛կ,
 Զայնս ալ սանիլ միասին.
 Ըսե չի լան այլ լոկ բերկանք
 Ըզգան եւ քող ըսփոփին:

— Քեզ ո՞վ զրկեց անգուրք հրեօտակ,
 Շուտ հեռացիւր մեր հովէն.
 Տես արշալոյսն ծագի արագ,
 Լոյս սփռելով դես ու դէն:

— Թե գրասիրտ ես չըլլայի,
 Ձեի սաներ Ձեզ երկին.
 Ուր ձեր հոգին պիտի հրճուի,
 Անեծք պիտի սաք աշխարհին:

— Ըսէ՛ սակայն ես վերսին
Պիս՛ նանչնա՛մ հոն իմ եղբայր,
Կամ գգուանքն իմ ծնողքին
Պիս՛ վայելե՛մ անդադար . . . :

— Սիրոյ պէտք հոն չ'գգացուիր,
Ուր դուք գիրար չեք նանչնար.
Որպէս հրեշտակ միտս անձանձիր
Պիս՛ ծառայե՛ք սիրոջ յար :

— Ուստի բող որ իմ քաղցր եղբայր.
Հայրս ու մայրս ալ վշտահար
Հոս դեռ ապրին . . . եւ զիս մենիկ
Թեւիդ վրան սար երկինք :

1901 Քենկոր

ԲՈՑԵՐՈՒ ՄԷԶ

Ա.

« Երեւոյս ե, փրչե՛ հողմիկ մեղմասող,
Բոյր սրփռելով խնկաւեք,
Լուսամուտիս բառին բռչունք հող ի հող,
Ե՛լ, ձայնակցե՛, անոնց հետ :

Ե՛լ, սոխակը վարդի բոսր կրծից ֆով
Կ'երգէ շեշտով քրքռուն,
Եւ թեւաբաց մեղունները բզզալով,
Հիւք կը ֆաղեն ընդ այգուն :

Ելի՛ր ցասկե՛ մինչեւ հիմա Արմինեն
Հագուած շփուած ոսկեհեր,
Քեզ կ'սպասէ, շուտ ել ներս նայուածքեն
Յրուին արտիդ յուզումներ » :

Ըսաւ Մրկօն եւ հագուելով անհամբեր
Գնաց իսկոյն իւր սենեակ
Ո՛ւր առկայծեալ լ'անմեղ սիրքը սրտիւր
Հառաչելով շարունակ :

Հագիւ մենիկ պ'սուհանին ընդ առաջ
Նստաւ յուզեալ պատանին,
Քացաւ փեղկերն հանեց արեւն մի հառաչ
Երբ ձայն մ'եկաւ ականջին :

Ինչ կը նստիս սենեկիդ մեջ անսարբեր,
Հրդեհ կայ, մեջ մեր քաղին.
Չե՛ս մի լրսեր ձայնը, աղմուկն ու լացեր,
Որ բռներ են ամեն դին :

Հրդեհ, ըսաւ Մրկօն ապշած, Պաղտիկին,
Սոսկա՛լի բան, որո՛ւ տուն
Դեռ չերեւցած կարմիր արեգ նորածին,
ձարակ կ'ըլլայ բոցերուն :

— Մարկոս աղբօր տունն է խոտոր քարաշէն,
Որ շատ մօտ ջէ քաւ խցկին .

Այն բոցարծարծ հրոյ մեջ էլ Աւրիմէն,
Կարծեմ տուած է ալ հոգին :

Հազիւ լսեց Աւրիմէի քաղցր անուն,
Խոռովեցաւ նա յանկարծ ,

Եւ վար ցատկեց սանդուխներէն ու սօզոյն
Կը վազվրզէր . . . բայց անդարձ :

« Պիտի նետուիմ բոցերուն մեջ անվրդով ,
Պիտի գրկեմ Աւրիմէն ,
Պիտ' համբուրեմ վերջին անգամ դողալով .
Գուցէ ապրի նէ նորէն :

Թէ չի կրնամ գրկել ըզնէ մի անգամ,
Բազուկներս տարածած

Պիտի պառկիմ բոցերուն մեջ ո՞հ յայնժամ : »
Կըսէր Մըկօն ձայնով ցած :

Անտունչ հասաւ հրդեհի վայր խղհալին ,
Ի՞նչ ամբոխին մեջ սրբացաւ ,
Նախ նեմարեց ողբն ու կոծը Մարկոսին
Ըսաւ ինքնին ցաւեցաւ . . . :

Շատեր ըսին , Եկաւ կտրին պատանին ,
Կրնա՞յ փրկել հեզն աղջիկ :

Ըսին աղբա՞ր աղէ՛ նետուէ մեջ բոցին
Թող փրկուի կոյսն գոհաբէկ :

Փութով , Մըկօն խեղճ Մարկոսին մօտեցաւ
Որ մօտ հեծէր մի ուրիշ ,
Եւ նանչնալով այդ պատանին պէխով սեաւ
Կը դիտէր զայն ակնապիշ :

Այն մարդուկն էր Աւրիմէին նրշանած :
Ըսաւ Մըկօն Մարկոսին
Թէ կարենամ փրկել դուստդ կիսալքեաց ,
Կու տա՞ս , խօսէ՛ , զայն ինձ կին :

— « Կ'երդնում տղաս այս ամբոխին մեջ՝ էքէ դուն
Կրնաս փրկել իմ դուստր ,
Անտարակոյս քեզի քամ ի կնուսքին
Իմ Աւրիմէն կոյս գողցր : »

Վաղբեկնապէս բոցերուն մեջ սուղեցաւ ,
Վէն , քաջարի պատանին ,
Եւ քիչ յետոյ ուրախութեան մեջ անբաւ
Գուրս փրքեցաւ հետ կուսին :

Դրաւ զանի իր հայրիկին հիշտ առաջ ,
Ըսա՛ւ , խոստումդ կատարէ ,
Բայց անտարբէր նա դառնալով դէպ յիւր աջ
Նախկին փեսան կ'աւետէ . . . :

Խեղճուկ Մըկօն յուսահասած շուարելով
« Տեսէ՛ դրժէ իւր խոստում »
Կ'աղաղակէ բարձրաձայն եւ անվրդով
Կը նետուի մեջ բոցերուն :

Բազկասարած հանգչի հո՛ն, ո՛ւր նե նուաղեալ
 Գտնուած եր քիչ մ' առաջ,
 Եւ շըւարած դուրս այ վերջին անգամ մ' ալ
 Վառ սրտիկին մի հառաչ :

Ամբոխին մեջ ուժգին ձայն մը կը լսուի,
 Զա՛յն որ գոչե՛ օգնութիւն .
 Քայց քիչ յետոյ լուր մը կ' ելնէ անուելի,
 Թե՛ զոն զնաց բոցերուն . . . :

Բ.

Հազիւ ամբոխն ա՛լ կը ցրուի սխրագին,
 Մըկոյի մահն ողբալով,
 Հեզ աղջիկը քիչ մ' սքափած շա՛ս ուժգին
 ձիչ մը դուրս այ փետին ֆով :

« Ո՛վ եր, ո՛վ եր զիս ազատող պատանին,
 Ըսե՛ հայրիկ ո՛ւր զնաց .
 Որո՞ւն բազուկ կուռեցաւ հետ հրդեհին,
 Ո՛վ եր փրկիչն իմ կենաց » :

Իսկոյն Մարկոս հեկեկելով կըսէ, Տեր
 Աստուածըն է որ յայնժամ
 Նճմարելով մեր հրդեհած սան բոցեր,
 Շնորհեց կեանք անբառամ :

Անդին Պաղտիկ որ հրդեհին վայր կեցած
 Դիտէր ոսկերէն մտերմին,
 Եւ մերթ աչերն բարձած յերկին ամպամած,
 Կը հառաչէր լալագին :

Լըսեց յանկարձ Մարկոսի ձայն եւ իսկոյն
 Դեպ Արմինէ մօտեցաւ
 Եւ դիտելով ներա դէմքը ո՛ն սժգոյն,
 Ա՛խ մը քաշեց ու ըսաւ :

« Բոցերուն մեջ խորովեցաւ պատանի՛ն,
 Այն քեզ փրկող հրդեհա՛կ,
 Տե՛ս, սեւ դարձած ոսկորները մեջ մոխրին
 Բողոք բառնան շարունակ : »

Ապա դեպ ի Մարկոսի կողմ ուղղելով
 Իւր խօսքերը հրալիր
 Ո՛վ դու անգուր գոչեց ցասմամբ դողալով
 Ինչո՞ւ Մըկոն մեռցուցիր :

Դու չեի՞ր անոր խոստացողը — ո՛վ անգուր
 Թե՛ իմ դուստր Արմինէն
 Բեզ պիտի սամ երէ ընդ փոյր
 Փրկես ըզնա բոցերէն : »

Ինչո՞ւ, ինչո՞ւ ո՛վ ապերախս դու եա՛կ
 Քու խոստումդ մերժեցիր,
 Տե՛ս քաջարի եւ յուսահատ պատանեակ
 Եղաւ կոյս մի ո՛ն մոխիր :

Նուաղեցաւ հեգ կուսիկը երբ մեկէն
 Լըսեց անունն սիրելոյն,
 Եւ ի գեսին սփռուելով աչերէն
 Բրդան կայլակֆ շիբերուն :

Մարկոսն եւս ամօքահար իւր աղջիկ
 Գրկեց մեղմիւ եւ ուժգին
 Քայլ առնելով սարաւ փետին սան խցիկ,
 Ո՛ւր պառկեցուց մեջ մահնին :

Գ.

Հայրն ու փեսայ, մայր եւ զոհանչ կուսին հով
 Բոլորուեցան իսրաւիս ,
 Որ կիսաբաց եւ նըւաղեալ աչերով
 Դիտէր զանոնք անժպիս :

Ըսաւ Մարկոս յայնժամ աղջկա՛ն, դստրի՛կդ իմ,
 Արդեօք ցաւ կա՛յ արտիդ մեջ,
 Խօսե՛ անուշ լեզուաւդ, որ ես չի իսրիմ,
 Որ ա՛լ չի լան աչքերս գեջ :

Լո՛ւկ՝ գոչեց աղջիկն ուժգին եւ յանկարծ
 Բանալով իր նուաղ աչեր,
 Ըսա՛ւ, չես դու իմ հայրիկս ալ, լուռ կա՛ց
 Է՛ր կեանս ինձ առնրբեր :

Եւ քիչ յետոյ նուաղօրէն ձայն մ'եկաւ
 Թե պիտ' երբամ ես երկին,
 Հոն զտնելու եւ յիարելու միտս անձկաւ
 Իմ սիրելիս Մըկոյին :

Խփեց աչերն եւ քիչ յետոյ հրեւտակին
 Յանձնեց հոգին կոյսն հիւժեալ,
 Թ՛ուաւ զնաց դեպ ի երկին Մըկոյին,
 Հո՛ն, անոր հետ միանալ :

1901 Քենկրը

ՀԻՄՆԵԱԼ ՊԱՏԱՆԻՆ

Վերջապէս մեռա՛ւ խեղճ Աննան . . . հեռո՛ւն
 քաղքին մէկ ծայրը, հիւղակի մը մէջ, մեռա՛ւ,
 առանց ունենալու այցելու մը, երբ քուրջեքու
 մէջ փաթթուած հիւանդ կը տառապէր . . . դեռ
 չարաթ մ'առաջ տեսած էի զինքը որ իւր մէկ
 հատիկ զաւկին ինչոյի հետ Առաջնորդարանէն
 կու գար . խե՛ղճ Աննա . . . պաղատեր է Առաջ-
 նորդին որ պանդուխտ էրկան հոսմակ մը գրուի
 եւ մի առ մի յիշուի իր ընտանեկան թշուառ վի-
 ճակը . . . Միշտ կուլար իր տասնեւհինգամեայ

զաւակին վրայ որ ութը տարեկան հասակին մէջ զրկուած է հօր մը սիրայիր գորովանքէն, խեղճո՛ւկ կին . . . կարծես էրկան մահուան գոյժը տակաւին չի լսած, գուշակեց, եւ յուսալով գտնել զայն գերեզմանէն անդին, հրաժեշտ տուաւ եւ մեկնեցաւ . . . :

Խաչօն, հիմա՛ զրկուած հայրիկէն ու մայրիկէն կու լար այն կիսաւեր հիւղակին մէջ ո՛ւր իրմէ՛ զատ ոչ ոք կար, միայնակ մնացած էր այն չորս սեւ պատերուն մէջ որուն արեւը ցորեկ ատեն իսկ լուսինը գիշեր ժամանակ կը զլանային մաս մը զրկել իրենց կենսատու շողերէն :

Խաչօն մթութեան զաւակ, իր կենաց մէջ մթութեան վարժուած, երկրի վրայ առաջին սիրածն էր իւր մայրը եւ ապա անձանօթ հայրիկը որուն համար՝ կըսեն իր դպրոցի ընկերները թէ շատ անգամներ ա՛խ կը քաշէ եղեր սրտի խորէն պանդխտութիւնը ատելով . . . :

Ա՛լ հիմա բան մը միայն կար իրեն սիրելի, մայրենի տունը, հիւղակը . . . կը սիրէր միշտ նստիլ հո՛ն, ուր մայրիկին գորովն ու գգուանքները վայելած էր տասնեւհինգ տարի՝ շարունակ : Ա՛լ չի պիտի կրնար երթալ դպրոց քանի որ մայրիկին հիւսած գուշակներու շահով կը յաճախէր հոն, միակ իրեն օթեւան ընտրած էր այն պարզ եւ մթին հիւղակը ուր ճիշդ մայրիկին պառկած տեղը կը նստէր, իր մխիթարութիւնն էր միմիայն լալ . . . միշտ արցունք կը թափէր սրտին դառ-

նութիւնը գոնէ այդ արցունքներու հետ դուրս տալու համար . . . :

Օրեր անցած էին : Մայրիկին թողած հացերն ալ հատեր էին, զգաց որ անօթի է, ուրիշ ճար չի կար պիտի մուրար :

Երբ մութը կոխեց, զլուխը վար առած դուրս ելաւ հիւղակի կիսաբաց դռնէն, խաչակնքեց եւ մի քանի անգամ արտասոււթոր աչերով ըսելէ վերջ իր մայրիկին սորվեցուցած աղօթքը սկսաւ քայլել, կը յառաջանա՛ր, դէպի ո՛ւր, ինքն ալ չէր դիտեր . գիշերուան պատճառաւ ոչ ոք կը նշմարուէր քաղքի նեղ փողոցներուն մէջ, կը կարծէր թէ մահուան գիրկը պիտի երթար . . . վերջապէս մօտեցաւ դրան մը որուն վերի սենեակներուն մէջ ճրագ վառուած էր, պահ մի շուարած կեցաւ հոն, չէր դիտեր թէ ի՞նչ պիտի ըսեր . բայց քիչ մը վերջը ցած ձայնով մը հաւաչեց « Անօթի եմ, քիչ մը հաց : »

Տան տէրը ագահ եւ անխիղճ հարուստ մը, բարկութեամբ կը վռնտէ զայն . Խաչօն յուսանատած քովի դրան կը մօտենայ եւ չկրնալով հոն ձայնել կ'սկսի լալ, բայց մէկէն դուռը բացուելով ցած եւ բարակ ձայն մը կը լսուի « ինչու կու լաս, ա՛ն քեզի թարմ հաց . » խեղճ երիտասարդը զլուխը դարձունելով չքնաղ կոյսի մը պատկերն կը նշմարէ իր դէմ, որ իրեն հաց կ'երկընցնէ գթոտ ժպիտով մը . պահ մի սառած կը կը մնայ, ապա դողդոջ ձեռներով կ'առնէ թարմ

հացը . . . Աչերը կը տփգունին , կուզէ վերստին զիտել այն բանաստեղծական պատկերը որ արդէն աներեւութացած էր , կը մոռնայ այն ատեն իր անօթութիւնը , հանդէպ կուսին բան մը կ'զգայ սրտին մէջ . . . որ կ'սկսի տանջել զինքն . . . հառաչ մը դուրս կու տայ « սիրեցի քե՛զ , զի դու միայն զթացիր իմ վրայ . . . կը մօտենայ վերստին , դուռը ա՛լ դօցուած էր , ի՞նչ ընէր . . . զարնելու կը համարձակի եւ ահա դուռը յանկարծակի բացուելով խոթուադէմ մարդու մը ուժգին ապտակը կ'զգայ զիմաց վրայ , որ կատաղօրէն կը գոչէ , « թշուառակա՛ն , դեռ ի՞նչ կուզես » :

Խեղճը շանթահարի մը նման , յուսակտուր հիւղակը կը վերադառնայ , ուր կը պառկի ճիշտ մայրիկին պառկած տեղը . . . ամբողջ գիշերն անքուն կ'անցունէ եւ արշալոյսին դէմ կուզէ ոտք ելնել , բայց աւա՛ղ , ծունկերը չեն շարժիր . . . նոյն սէրը որ կ'զգայ կոյսին հանդէպ տարբեր բան մը կերեւի իւր աչքին , կը խորհի պահ մի , կոյսն է լոկ իր մտքին երեւակայութիւնը , կը մոռնայ մայրիկը , եւ հիւղակին պատերուն վրայ իր աչքին ուրուականներու պատկերներ կը տեսնուին , կարծես չուզեր բնակիլ հոն , կը ջանայ վերստին ոտքի ելնել , բայց պարապ ջանք , կուզէ որ դռնէն դուրս ելնէ եւ երթայ կոյսին դրան առջեւ հոն գոնէ իր հոգին աւանդելու . . . : Երեք օրեր կ'անցնին դանդաղօրէն , բայց խեղճ Խաչօն հացի կտոր մ'իսկ չդնէր իր բերնին ,

փափկիկ ձեռներով սրտին վրայ կը սեղմէ այն ճերմակ հացը որ կոյսի մը ձեռքով իրեն յանձնուած էր , խեղճ Խաչօ . . . դժնդակ ճիգերէ վերջը յաջողեցաւ ոտքի ելնել , եւ երերալով մօտենալ այն դարակին առջեւ որուն մէջ կար իր սիրած բաները , թո՛ւղթ , գրիչ , գիրք եւն . առաւ թղթի կտոր մը , գրիչն ու կաղամարը , եւ անկողնոյն մէջ աւելի ինկաւ քան մտաւ , իր նիհար մասներով բռնեց գրիչը որ մասներուն պէս կ'երերար , եւ սկսաւ մրտել թուղթը . . . կը գրէր : Իր աննկարագրելի յուզմունքէն աւելի մեռելային քան կենդանի կարմրութիւն մը իր դէմքին շուրջը բոլորուած էր . վերջապէս գրեց թուղթը մէկգի նետեց եւ ուժասպառ երկնցաւ անկողնին մէջ . դէմքին կարմրութիւնը կամաց կամաց տփգունեցաւ . . . սպիտակ ձեփի գոյն առաւ . . . վերջին հառաչ մ'ալ չըթունքներէն դուրս սլացաւ եւ գնաց իր մայրիկին ետեւէն . . . :

Դեռ երէկ զինքը քահանայ մը զոյգ մը մեռելակիրներու ընկերակցութեամբ թաղեց . . . :

Ահա պարունակութիւնը այն մրտուած թղթի մը դոր քահանան գտած էր անոր սնարին մօտ :

ՈՎ ԱՍՏՈՒԱԾ

Թե ունենայիր մայր մը խանդակաթ,
Որ քեզ օրօրէր լանջերուն մեջ նիւզ,
Որուն գրկին մեջ հանգչէր քու նակաս,
Որով ըլլայիր երջանիկ, անվիտ :

Մայր մը գոր մահը օր մ' առնէր սանէր,
Զրգելով ըզքեզ որք եւ անպաշտպան,
Ո՛չ, չէիր դրնէր դու յայնժամ ո՛վ Տէր,
Մեր անբիծ նակսին կընիքն որբութեան :

Թե ունենայիր հայր մը բարեգութ,
Որ քեզի հոգար եւ խանդով մեղմիկ
Համբոյր դրոշմեր կարմիր այտերուդ,
Որով ըզգայիր ըզքեզ երջանիկ :

Հայր մը որ մի օր հրաժեշտ սալով
Քեզի եւ իսկոյն բաժնուէր, ո՛վ Տէր,
Շնչելու համար օտար երկրի հով,
Մեր նակսին « նժղեհ » բառն չէիր գրէր :

Թե ունենայիր մի ծաղկահասակ
Սիրունի մ'անմեղ, չճնաղ, վարդերես,
Ըզգալով սիրոյ բոյրըն անաւուակ,
Երգէիր զըւարթ « երջանիկ եմ ես » :

Սիրունի մ'որ օր մ' ալ խոժոռ դիմով
Մերժելով ըզքեզ հեռանար ի քեզ,
Իրաւ որ, ո՛վ Տէր, իսկոյն զղջալով,
Պիտի ջնջէիր « Սէրը » այն ատեն :

Թե մայրիկիս պէս դուն ալ անպաշտպան,
Է՛ն սառապէիր սեւ ֆուրջերու մեջ,
Տեսնելով լալըն քու ֆաղցրիկ մանկան,
Պիտի աւելնար արտիդ ելեւեջ :

Եւ անե՛ծք սալով յայնժամ ո՛վ Աստուած,
Կենաց դառնութեան վըրայ նողկալի,
Պիտի չի սայիր մեզի անկասկած,
Այս կեանքն ա՛լ սրխուր, կեանքը ցաւալի . . . :



Ա Ռ

ՍԻՐԵՅԵԱԼ ՀՕՐԵՂԲԱՅՐՍ

ՏՕՔԹՕՐ ՅԱԿՈՒԲ ԷՅԷՆՏԻ ԻՍՊԷԶԵՐԵԱՆ

~~~~~

Մանուկ մ'եր փոքրիկ մեջ իր մօր գրկին ,  
 Ձերդ մի հրեշտակ ,  
 Որ դեռ շատ կանուխ քրուալ դեպ երկին  
 Սրբիդ հաստակ :

Թրուալ ու գրնաց շուտ անհետացաւ  
 Ձերդ մի հրեշտակ ,  
 Քեզ ժառանգ բողոյժ բիւր կըսկիծ ու ցաւ  
 Սրբիդ հաստակ :

Վարդ մ'եր նորածիլ ի ծոց մայրիկին ,  
 Ձերդ մի հրեշտակ  
 Դեռ բոյր չը սփռած ո՛հ գրնաց երկին  
 Սրբիդ հաստակ :

Գրնաց միանալ իր եղբայր վարդին  
 Ձերդ մի հրեշտակ ,  
 Հագիւ բոլորած կարծեմ մեկ տարին ,  
 Սրբիդ հաստակ :

Դիտեմ զբարեցաւ սիրտդ բանաստեղծ  
 Առիւր քու կիթառ ,  
 Եւ երգեցիր զայն հոգիով մ'անկեղծ  
 Յուզուած անդադար :

Բայց երբ հանեցին քելերն կիթառիդ  
 Թըրքըռուն շեշեր ,  
 Որոնց արձագանգ կը ծակեր քու սիրտ  
 Հոգիս քեզ հետ քր :

Այժմ չես միմալ մեջ քու սենեկին ,  
 Օգնիկդ հրեշտակ ,  
 Շուտ հասած քու քու ի ծոց մայրիկին  
 Փրպսի շարունակ :



## ԿՈՅՐ

### ՅՈՐՈՍ ՊԱՊԱՆ

(Իրական)

Ա.

Յաճախ շուկայի պողոտային վրայ կը տեսնեմ այդ կարճահասակ եւ ցանցառ մօրուքով ծերուկը, մէկ ձեռքին մէջ գաւազան մը, իսկ միւսին մէջ ալ հացի կտոր մը սեղմած, առաջինը կորաքամակ մարմնոյն եւ երկրորդն ալ իբր սրբաբան յենարան մը կը ծառայեն: Ամառուան սաստիկ տաքէն ընկճուած երբ կը զգայ թէ փայտի պէս չոր մարմինը թաց քրտինքներու մէջ կը լողայ, կու գայ զովանալ այն հաստարմատ եւ հինաւուրց որթետունկի հովանիին տակ որ ճիշդ շուկային մէջ տեղը ազբիւրի մը մօտ է: Երբ ճամբու վրայ ժողովրդեան անցուղարձը նուազի, եւ մեր խեղճ ծերուկը հասկնայ թէ ոտքի ձայները բոլորովին դադրած են, կը սկսի ազեկատու ձայնով մը տասիթան մը երգել, որ քիչ անգամներ կրնայ հասկցուիլ իր դուրս ցցուած կոկորդին տձեւութենէն եւ ձայնին անյարմարութենէն:

Ոչ ոք հետաքրքրուած է այս ծերունիին կեանքով. շատ անգամ դիտած եմ զինքը որ այդ դարաւոր որթետունկի արմատին կոթնած իր զիմազծի երբեմնակի փոփոխութենէն կարծես նորանոր խորհրդածութիւններ կ'արթնանան

իր երեւակայութեան մէջ, մերթ ընդ մերթ կարծես վրէժինդիւր գաղափարի մը ազդեցութեամբ, եռանդով կուզէ բանալ իր մշտափակ աչերը, գլուխը դէպ ի վեր կը վերցնէ, մղուձ մը կուտայ արտեւանունքներուն, որոնք սակայն նոյն անկարեւոր շարժումներով կը յիշեցնեն իրեն թէ կոյր էր միշտ. . . : Հառաչելով դէպ ի վար կը ծռի. հազիւ թէ ոտքի վրայ կ'ելնէ, առանց շուարելու կ'ուզէ իր դողդոջուն քայլերը դէպ ի այն կողմը ուր կուզէ երթալ. ան չգիտէր ճամբու վրայ մուրալ, տեսած չեմ անոր որ եւ իցէ մէկէն դրամ եւ կամ ուրիշ բան պահանջելը, Աստուծոյ միայն յանձնած է ինքզինքը եւ թէ բնաւ անօթի մնացած չէ քանի որ իւրաքանչիւր քայլին Աստուծոյ անունը կը յիշէ:

Քաղքին մէկ ծայրը ցած փողոցի մը մէջ է անոր տունը, ուր կերթայ ամէն իրիկուն քանի մը կտոր հաց, մէկ քանի պղնձէ դրամներ եւ իր անմեկին ընկերը եղող գաւազանը սեղմած երկու դողդոջուն ձեռաց մէջ, չեմ գիտեր ինչի՛ր մըտմտալով եւ շարունակելով իր ցերեկի մենախօսութիւնները. . . :

Բ.

Երեկոյ էր, ժամը տասնը մէկին մօտ, կոյրի մը գաւազանին ձայնն ըլլալը յիշեցնող մի թափով, Թորոս Պապայի գաւազանին ձայնը ա-



կանջիս հասաւ . ետիս դարձայ եւ ձայն տուի որ նստի մի քիչ , չնորհակալութեամբ ընդունեցաւ իմ առաջարկս եւ հաստ գաւազանին կռթնելով նստաւ , տաժանակիր աշխատութենէ յոգնած բանւորի մը պէս , կը թուէր թէ չափէն աւելի չըջագայած էր այդ օրը , քաղքի արահեաներուն վրայ : Թէեւ ժամանակը ուշ էր բայց ժամանակէ մ'ի վեր հետաքրքիր այդ ծերուկի կեանքին , համոզիչ յառաջարանէ մը վերջը խնդրեցի որ իր կեանքը ինձի պտտմէ . այն ինչ փափաքս ըմբռնեց , թորոս Պապա չըթունքներու մէջէն , սա խօսքերը դուրս տուաւ . « անա առաջին անգամն է որ հարցընող մը դատայ կեանքիս այլ եւ այլ պարագայներու մասին , ազնիւ ունկնդիր , եթէ օրերով պատմեմ , չպիտի կրնամ վերջ մը տալ մանկութենէս ի վեր գլխէս անցած դարձածին վրայ , բայց նկատելով որ ժամանակը ուշ է , ինչ որ ոտնաձայներու նուազութենէն կը կռահեմ , համառօտակի պատմեմ , ինչ որ կեանքիս գլխաւոր պարագաները կը կազմեն , ըսելով ձեռքի գաւազանը քովը պառկեցուց եւ այս կերպով սկսաւ իր վէպին :

« Մանուկ հասակիս մէջ կորսնցուցած էի հայրս , իսկ մայրս միեակ իր աշխատութեամբ կ'պարեցնէր զիս եւ մի քանի քոյրերս . երբ չափահաս եղայ եւ խելքս ամէն բանի հասնիլ սկսաւ որոշեցի որ մայրիկիս աղաչեմ եւ իր աշխատութեամբ խնայած երեք մէճիտով եզ մը

ծախու առնեմ , գոնէ շաբաթը մէկ , երկու անգամ մօտակայ անտառներէն փայտ բերելով , քէէ շատ վաստակով ծախելու քաղաքացի հարուստներուն :

« Շատ ժամանակ չ'անցուցի եւ խորհուրդս ի գործ դրի , եզ մը ունեցայ իբր անմեկին ընկեր մը , որու հետ անտառը երթալով սկսայ շահիլ աւելի քան որչափ պէտք էր հոգալու մեր բազմանդամ ընտանիքին պէտքերը , որուն վրայ աւելցած էր այն ատեն ամուսնացած քրոջս պարագայներն ալ , իր ամուսնոյն մահուան պատճառաւ : Աստուծոնէ մինչեւ իրիկուն առանց հանգըստեան ժամանակ մ'իսկ վայելելու քրտինք կը թափէի , աշխատութիւնն էր առաջին յենակէտս :

Գանի մը տարիներ անտառային այդ կեանքով անցուցի օրերս , երբ մեր հարուստ դրացիներէն մին գնահատելով գործունէութիւնս , եւ յայտնելով իր փափաքը թէ Պոլիս պիտի գաղթէր եւ այս առթիւ պէտք ունէր իրեն , զիս ուզեց իր քով առնել . յօժարակամ ընդունեցայ այդ առաջարկը . միջանկեալ կերպով չեմ կրնար կեանքիս կարեւոր պարագաներէն մին չյիշել . տեղացի Ջինիի անուշով աշուղ մը կար , ի ծնէ կոյր , որուն հետ սերտ բարեկամութիւն մը հաստատած էի , եւ ի յիշատակ մեր բարեկամութեան Հիւմի անուշը տուաւ ինձի , այն օր որ Պոլիս պիտի մեկնէի գործատիրոջս հետ :

« Պոլիս օր գացի , շատ երջանիկ զգացի ինք-

զինքս, կարծես թէ դրախտ մը փոխադրուած էի. վերջապէս երջանիկ այնքան որ գործատիրոջս երախտագիտութիւնն յայտնելու համար համբեղած էի կարծես. ինչ որ է հոն անցուցած երկու տարուան կեանքիս մանրամասնութիւնները յիշել զանց կընեմ, սա միայն չմոռնամ ըսելու թէ տարուան մը մէջ յաջողեր էի վարպետիս համակրութիւնը լիովին շահիլ, այնպէս որ գործունէութեանս եւ հաւատարմութեանս համար, սկըսաւ սիրել զիս իբրեւ իր մէկ հատիկ զաւակը, արդէն ինքն ալ զաւակ չուներ. թէ՛ ինքը եւ թէ՛ տիկինը հաւատարմութեանս վրայ այնքան համոզուած էին որ, տան ամէն ծախքերն հողալու իրաւունքը ինձ յանձնեցին, ես ալ շնորհակալութեամբ ստանձնած էի այդ դիւրին գործը:

«Օրեր անցան եւ երբ օր մը մասնաւոր գործի մը համար տուն դացի եւ գործս աւարտելով դուրս ելած՝ խանութ կերթայի, դրացի հարուստի մը աղջկան — որոնց սենեակը մեր տան սենեկին կից էր — ձայնը լսեցի որ ետեւէս կը պռուար, աղաչելով որ տուն վերադարձիս բերեմ իրեն երկու դոյզ գուլպայ, զոր կը յանձնարարէր իր անուշիկ, կրակոտ աչերը ինձ ուղղելով. երբ դրամը ձեռքս կուտար աչքերս կարծես անոր սեւ աչքերուն մէջ մխուեցաւ, վայրկեան մը դամուած մնացի հոն եւ նորա երեսին վրայ վայրկեանական կարմրութիւն մը նշմարելով, աւելի հմայուեցայ այդ շարածիճիին ազուրուրթեանէն եւ

չփոթած հեռացայ հազիւ կարենալով խոստումս իրեն լսելի ընելու:

«Աւելորդ է ըսել թէ գուլպաները զնեցիբայց, այդ օրէն սկսեալ երեւակայութիւնս աղջկան չքնաղ դէմքովը զբաղած էր, ամէն օր անհամբերութեամբ կը սպասէի որ երեկոյ ըլլար տեսնէի զնէ եւ անոր եռանդոտ աչերուն մէջ յեղյեղէի երազներս, նէ որ ամէն իրիկուն պատուհանին առջեւ ձամբաս կը սպասէր, այն ալ իր սրտին մէջ ինձ հանդէպ բան մը կը զգար, եւ այն օրէն իրենց տան յանձնարարութիւնները ինձի ընել սկսաւ, ա՛լ անկէ վերջ ամբողջ փափագս էր, զայն տեսնել անոր հետ խօսակցիլ, անոր ժպիտը երազել. այսպէսով անցան շատ օրեր, երջանիկ օրեր, որոնք կարծել կուտային թէ երկարօրէն պիտի շարունակուին. . . շատ անգամ գիշերներն իսկ անքուն կանցունէի եւ ականջս իր սենեկի պատին կութնցուցած կը կենայի, անոր ձայնը լսելու յուսով: Վարպետս եւ տիկինը կը հարցափորձէին թէ ինչո՞ւ համար օրէ օր կը արժգունիմ եւ մարմինս երթալով կը նիհարնայ մինչեւ իսկ աշխատութիւնս թեթեւցուցին: Վերջապէս օր մը տիկինը տան բժշկին խորհուրդ մը հարցուցեր է իմ մասիս եւ սա պատասխանը առեր է որ եթէ օդափոխութիւն մը ընել կարելի ըլլայ, կրնայ վերստանալ իր նախկին առողջութիւնը:

«Երեկոյ մը կերակուրէն վերջը, տիկինը

բժշկին խօսքը կրկնելով, վարպետին հետ վերջնական որոշում մը տուին, զիս մէկ ամսուան օգափոխութեան ղրկելու, ես որ գաղտնիքը երեւան չհանելու համար չէի կրնար դիմադրել անոնց, լոկ առ երեսս շնորհակալութիւն մը կը յայտնէի :

« Վերջին գիշերն էր, հետեւեալ առտուն կառքը դրան առջեւ պիտի գար զիս տանելու . ինձ անանկ կու գար որ օգափոխութիւնը մահուան գիրկը պիտի ըլլար ինձի համար, կը խորհէի, ինչպէ՞ս մնաս բարով ըսելու էր այն հրեշտակին որուն նայուածքը կ'երջանկացնէր զիս . . . »

« Հագիւ աքաղաղները սկսան խօսիլ եւ արշալոյսը արեգական շառագոյն ձառագայթներ փակեց սենեկին պատուհանէն ներս, վեր ցատկեցի անկողնէս եւ տեսնելով որ գործատէրս խորքուն մը կը քաշէր, բացի փողոցին դուռը եւ ուղղակի դրացունիին դրան մօտենալով կամաց մը ձայն տուի եւ երկրորդ անգամուն ուժգին կերպով դուռը զարնելով, ներսէն ոտնաձայնի մը յամրաքայլ դէպի դուռը մօտենալը լսեցի . ո՛հ, սիրունիիս ոտքին ձայնն էր այդ, վերջին անգամ պիտի կարենայի լսել զայն . երբ դուռը բացուեցաւ, ի՛նչ կը տեսնես . ձերմակ դէմքին վրայ այդ ձերմակ գիշերազգեստը որքան վայելած էր, չէի կրնար երկու ձերմակներուն տարբերութիւնը հասկնալ . ծունկերս սկսան դողդողալ . բոլորովին արբշիւ, ձիւնի պէս ձերմակ ականջիս ծռած՝

ցած ձայնիւ ըսի, մնաս բարովի եկած էի քանի որ չպիտի կրնանք տեսնուիլ ասկէ վերջը : Երբ այս խօսքերն արտասանեցի շուարեցաւ, շիտթութիւնէն այտերուն ձերմակութիւնը վարդի գոյնին փոխուեցաւ, բան մը պիտի ըսէր չկրցաւ ըսել, եւ սկսաւ դրան ետեւը շրջելու . այն ատեն առիթէն օգտուիլ պէտք էր, մօտեցայ իրեն եւ բազուկներուս ոյժը ժողվելով, մոռցայ պահ մը փողոցի դրան բաց ըլլալը եւ անգթութեամբ գրկեցի զնէ, եւ մինչ համբոյր մը դրօշմելու վրայ էի, յանկարծ ճիշդ դէմս կանդնած տեսայ իր խոփուադէմ հայրը, որու ապտակին ուժգին մէկ հարուածը այտերուս վրայ գոռաց . այդ վայրկեանին խելայեղած, տունէն դուրս նետեցի ինքզինքս, յուսահատ ու ընկճուած . զգացի որ նախատինք մ'էի ինչպէս այդ տան նոյնպէս ալ գործատիրոջս որ այնքան վտան էր անխառն բարոյականիս եւ հաւատարմութեանս վրայ . . . առի քալեցի առանց գիտնալու թէ ո՛ւր . մինչեւ որ գացի ծածուկ տեղ մը, ուր միտքս ամիտիելով որոշեցի հեռանալ . . . հետեւեալ առտուն ջրեւպաններու հետ մէկտեղ ետիս կը ձգէի Պոլիսը, նախատալից յիշատակ մը ձգելով . . . »

Օրեր անցած էին, ալ ծննդավայրս էի, սակայն սրտիս մէջ ինկած որդ մը կար որ կը կրծէր զայն, անհատնում արցունքներ թափեցի, մինչեւ որ վերջապէս ժամանակ մը սրտի մը մէջ թափանցելով մագնիսացնող մի զոյգ աչքերուս լոյսը

մարեցաւ , վերջին յոյսով մը դոր կը տածէի դեռ ,  
կրկին տեսնելու համար զնէ ժամանակ մը վերջ . . . :

Աչքերս ալ չէին տեսներ , և ես յիշեցի բարե-  
կամս Օհան , ի բնէ կոյր աշուղը որ յիշատակի  
մը համար Թորոս դրած էր անունս , իր աչ-  
քերուն և երգերուն յիշատակն ալ ծնելով աչքիս  
և շրթանցս մէջ . . . » :

Գ.

Կը տեսնեմ դարձեալ Թորոս Պապան , որ ամէն  
իրիկուն իր շրջագայութենէն յոգնած կու գայ  
կաթնելու դարաւոր որթետունկին , որ իւր դա-  
րեւոր ինքնախօսութիւններուն միակ հարազատ  
ունկնդիրը եղած է . . . հոն , Թորոս պապան կը  
կանգնի մտախոհ մինչեւ որ ոտնաձայները դադ-  
րին և այն ատեն կուղղէ իր « Գիշեր բարի » ն  
իր հինաւուրց յենարանին և ծանր ծանր կերթայ  
իր ցած տունը , ցերեկուան մենախօսութիւնները  
շարունակելով . . . :


1901 Քենկիրը



10321

Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Second block of faint, illegible text on the left page, also appearing to be bleed-through.



2073

